

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

**ԳՈՒՐԳՈՒՐԱՆՔ ՄԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԿՐԱՅ,
ՈՐՈՎՅԵՏԵՒ ԱՆՈՆՑ ԶՐԵՇՏԱԿՆԵՐԸ ԵՐԿԻՆՔԻ ՄԷՋ
ՄԻՇՏ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԵՐԿՆԱԲՈՐ ԶԱՅՐԸ**

ՊԱՏՊԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐՔԱԶԱՆԸ

Քրիստոնեական եկեղեցիներուն շարքին, Հայաստանեայց Առաքելական եկեղեցին եւս Ս. Յարութեան տօնի նախորդ Կիրակին կը տօնէ Յիսուսի Երուսաղէմ յաղթական մուտքին յիշատակը: Ծաղկազարդի տօնը ունի իր իւրայատուկ մթնոլորտը, որովհետեւ այդ օրը, մեր եկեղեցիները կը զարդարուին ձիթենիի ու արմաւենիի ճիւղերով, իբրեւ խորհրդանիշ՝ խաղաղութեան եւ յաղթանակի, ինչպէս նաեւ ժողովուրդին կողմէ Յիսուսի Երուսաղէմ ժամանման ժողովրդային դիմաւորումին:

Կիրակի, 9 Ապրիլին, մեր Թեմի եկեղեցիներուն մէջ Ծաղկազարդի տօնը նշուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագով ու յաւուր պատշաճի արարողութիւններով: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան այս առիթով Ս. Պատարագ մատուցեց Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարին մէջ եւ տուաւ օրուան խորհուրդը վեր առնող քարոզ մը: Ս. Պատարագի ընթացքին, ու քարոզէն առաջ, տեղի ունեցաւ մանուկներու թափօրը:

Իր հոգեւոր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ Ծաղկազարդի խորհուրդին ու յատուկ կարեւորութեամբ կանգ առաւ մանուկներու թափօրի աւանդութեան վրայ: Ան ներկայ հաւատացեալներուն ու ծնողներուն ուշադրութեան յանձնեց, որ մանուկները նման են երկնային հրեշտակներուն եւ հետեւաբար, արժանի են սիրոյ, գուրգուրանքի եւ հոգածութեան:

Ս. Պատարագի արարողութենէն ետք, տեղի ունեցաւ Դռնբացքի հոգեպարար արարողութիւնը, որ հրաւեր մըն էր պատրաստ ըլլալու Տիրոջ գալստեան:

ՀՕՄԻ «ԱՆԻ» ՄԱՍՆԱԾԻՂԻ ԾԱՇԿԵՐՈՅԹԸ

Եկեղեցական արարողութիւններէն ետք, Առաջնորդ Սրբազանն ու ներկայ հաւատացեալները անցան «Բաղրամեան» սրահ, ուր ՀՕՄԻ Մոնթեպելլոյի «Անի» մասնաճիւղը կազմակերպած էր Ծաղկազարդի տօնին յատուկ աւանդական ճաշկերոյթը:

Սեղաններու օրհնութենէն ետք, ներկաներուն ուղղուած իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ ընդհանրապէս ՀՕՄԻ գործունեութեան մասին ու վեր առաւ մեր եկեղեցական-ազգային աւանդութեանց ՀՕՄԻ հաւատարմութիւնը: Ան նկատել տուաւ, որ ՀՕՄԻ «Անի» մասնաճիւղին այս ձեռնարկը պերճախօս արտայայտութիւն մըն է այդ աւանդութեանց հաւատարմութեան, որուն շնորհիւ, մեր ժողովուրդի գաւակները ամուր կերպով կապուած կը մնան մեր եկեղեցւոյ ու մեր ազգային դարաւոր ժառանգութիւններուն:

ON PALM SUNDAY

LET US CHERISH OUR CHILDREN, FOR THEIR ANGELS IN
HEAVEN ARE ALWAYS IN THE PRESENCE OF MY FATHER

DECLARED THE PRELATE

In the Christian tradition, the Armenian Apostolic Church celebrates Palm Sunday, the triumphant entrance of Jesus into Jerusalem, on the Sunday before Easter. On this special feast, our churches are decorated with olive branches to symbolize peace and brotherhood during the welcoming of Jesus upon His entrance to the Holy City of Jerusalem, thus creating a unique atmosphere.

On Sunday, April 9, Holy Mass and special services were conducted in all Prelacy churches to celebrate Palm Sunday. On this feast, His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, conducted Holy Mass services at Montebello's Holy Cross Mother Cathedral. During Mass, a children's procession took place followed by the Prelate's sermon.

During his sermon, the Prelate reflected upon the message of Palm Sunday and gave special consideration to the tradition of the children's procession. He brought to attention that children are like angels, thus they are worthy of love, affection, guidance and care.

Following Mass, the rite of Opening of the Portals was conducted.

A.R.S. ANI CHAPTER LUNCHEON

After church services, the Prelate and parishioners gathered at "Baghramian" Hall where there was a traditional luncheon organized by the A.R.S. Ani Chapter. The Prelate blessed the tables after which he delivered his remarks. In his remarks, the Prelate expressed thanks to A.R.S. for all the deeds they perform and especially for their allegiance to our church and national traditions. He continued that these types of events, which bring people closer to each other, to the church, and to our heritage, is a great example of that allegiance.